ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գերեզմանատների շահագործում, գերեզմանատեղիների հաշվառում և հուղարկավորությունների գրանցում

«Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքն ընդունվել է 2006թ. փետրվարի 27-ին և ուժի մեջ մտել նույն տարվա ապրիլի 17-ին *(Այսուհետ՝ Օրենք)*: Ազգային ժողովն օրենքում հինգ անգամ փոփոխություն է կատարել, որից վերջինը՝ 2021թ. մայիսի 27-ին: Օրենքը կարգավորում է գերեզմանատների և դիակիզարանների շահագործման հետ կապված իրավահարաբերությունները և սահմանում հուղարկավորության արարողությունների կազմակերպման պետական կարգավորման հիմնական սկզբունքներն ու պայմանները:

2006թ. նոյեմբերի 23-ին է ընդունվել «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգերը, կանոնները և գերեզմանի վկայականի ձևը սահմանելու մասին» Կառավարության թիվ 1910-Ն որոշումը *(Այսուհետ՝ Կառավարության որոշում)*: Այդ որոշմամբ հաստատված կարգով սահմանվում են մարդու մահից հետո նրա մարմինը (աճյունը) կամ աճյունասափորը գերեզմանատան սահմաններում տրամադրված գերեզմանատեղում հողին հանձնելու (թաղելու), հուշապատի մեջ տեղադրելու կամ դիակիզելու հետ կապված գործողությունները:

2010թ. հոկտեմբերի 15-ին ստեղծվել է Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ: Վերջինս Երևան քաղաքում հուղարկավորության կազմակերպման ժամանակ մատուցում է ինչպես անվճար, այնպես էլ վճարովի ծառայություններ:

Օրենքով և Կառավարության որոշմամբ նախատեսված անվճար ծառայությունների մեջ է մտնում մահացածի մարմինը (աճյունը) հողին հանձնելու համար տրամադրվող գերեզմանատեղը՝ 2.5 քառ. մետր (2.5 մ x 1.0 մ), իսկ ընտանեկան գերեզմանի համար՝ առավելագույնը 12.5 քառ. մետր (2.5 x 5 մ)**:**

Աճյունասափորը (մահացածի մարմնի դիակիզումից հետո) հողին հանձնելու դեպքում համայնքային գերեզմանատներում անվճար հիմունքներով մեկ գերեզմանատեղի համար տրամադրվում է 1.0 քառ. մետր հողատարածք (1.0 x 1.0 մետր չափսերով), կամ աճյունասափորը տեղադրվում է հուշապատի մեջ:

«Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի տնօրինությունն անվճար պատրաստում և տեղադրում է մետաղյա ցուցանակ, որի վրա նշվում է հանգուցյալի անունը, հայրանունը, ազգանունը, ծննդյան ու մահվան տարեթվերը և գերեզմանատեղի հաշվառման համարը:

Գերեզման օգտագործող է համարվում այն ֆիզիկական անձը, որի անվամբ գրանցված է գերեզմանատեղը:

Համայնքի ղեկավարը կամ նրա լիազորած անձը կամ կազմակերպությունը գերեզման օգտագործող է համարվում այն գերեզմանների համար, որոնք չունեն գերեզման օգտագործող: Սույն մասով նախատեսված դեպքերում համայնքի ղեկավարը կամ նրա լիազորած անձը կամ կազմակերպությունն իրավունք ունի թույլատրելու հուղարկավորել բացառապես այդ գերեզմանում հուղարկավորված մահացածի ընտանիքի անդամին:

Գերեզման օգտագործողն իրավունք ունի՝
1)օրենսդրության պահանջներին համապատասխան՝ կառուցապատելու և բարեկարգելու իրեն հատկացված գերեզմանը.
2) հուղարկավորելու և վերահուղարկավորելու իր ընտանիքի անդամներին.
3) փոխանցելու իր իրավունքներն ընտանիքի անդամին.
4) ժառանգելու իր շահագործման իրավունքը:

Գերեզման օգտագործողը պատասխանատվություն է կրում, օրենքին և այլ իրավական ակտերով սահմանված կանոններին համապատասխան, իրեն հատկացված գերեզմանատեղի կառուցման, բարեկարգման և օգտագործման համար:

Հուղարկավորության իրականացման համար անհրաժեշտ է միայն քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման մարմինների տված մահվան վկայական: Յուրաքանչյուր թաղում կամ դիակիզում գրանցվում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնի թաղումների կամ դիակիզումների գրանցման մատյանում, որն արխիվում պահվում է անժամկետ: Մատյանում գրանցումից հետո գերեզմանատան տնօրինությունը տալիս է իր դրոշմակնիքով կնքված գերեզմանի վկայական, որը թաղման կամ աճյունասափորի տեղը հաստատող միակ փաստաթուղթն է:

Ընտանեկան գերեզմանատեղում հուղարկավորության փաստաթղթերի ձևակերպումը կատարվում է գերեզմանի վկայականի (բնօրինակի) կամ գրանցամատյանում նախկինում կատարված գրանցումների հիման վրա: Իսկ նշված գերեզմանի

վկայականի բացակայության դեպքում օգտագործողին տրվում է գերեզմանի նոր վկայական:

Յուրաքանչյուր գերեզմանատան համար համապատասխան մատյանները վարում են գերեզմանատների կառավարիչները կամ նրանց կողմից լիազորված պատասխանատու անձը:

Կայանալիք հուղարկավորության մասին գերեզմանատան կառավարչին պետք է ծանուցել մեկ օր առաջ: Հանգուցյալի թաղումը կատարվում է մահվան պահից ոչ շուտ, քան 24 ժամ հետո: Իսկ նոր գերեզմանատեղի հատկացում կատարվում է միայն բաց գերեզմանատներում:

Բաց է համարվում այն գերեզմանատունը, որտեղ առկա են նոր գերեզմանների տրամադրման համար ազատ հողատարածքներ: Փակ գերեզմանատներում հուղարկավորություններն ընդհանրապես արգելված են: Մասնակի փակ է համարվում այն գերեզմանատունը, որտեղ սպառված են նոր գերեզմանների տրամադրման համար հողատարածքները, սակայն նախկինում հատկացված գերեզմաններում կարող է իրականացվել վրահուղարկավորություն կամ նոր հուղարկավորություն՝ գերեզմանում ազատ տարածքի առկայության դեպքում:

Գերեզմանատներում հուղարկավորությունների կազմակերպումը՝ գերեզմանների տրամադրումը, դրանց հաշվառումը, գերեզմանատների պահպանումն ու շահագործումն իրականացնում են՝
1) համայնքային գերեզմանատների դեպքում՝ համայնքի ղեկավարը կամ նրա լիազորած անձը կամ կազմակերպությունը.
2) պետական գերեզմանատների դեպքում՝ լիազորված պետական մարմինը.
3) մասնավոր գերեզմանատան դեպքում՝ գերեզմանատան կառավարիչը կամ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող այլ անձինք՝ վերջիններիս և գերեզմանատան շահագործողի հետ կնքված ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա:

Համայնքներում հուղարկավորության կազմակերպման համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են ստեղծվել ոչ առևտրային կազմակերպություններ, ինչպես Երևան քաղաքի դեպքում է ստեղծվել «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ը:

Գերեզմանատների կազմակերպման համար տրամադրված հողատարածքները համարվում են անբաժանելի և չեն կարող բաժանվել ինքնուրույն հողամասերի, իսկ

զբաղեցրած հողատարածքների սահմանները ամրագրվում են կադաստրային քարտեզներում և ամրացվում են տեղանքում:

Համայնքային գերեզմանատների դեպքում համայնքի ղեկավարի կամ նրա կողմից ստեղծված ոչ առևտրային կազմակերպության վրա է դրված գերեզմանատների շահագործումը: Ընդորում՝ գերեզմանատները շահագործվում են համապատասխան գերեզմանատան կառավարիչների միջոցների հաշվին: Հետևաբար համայնքը պետք է կրի շահագործման հետ կապված բացասական հետևանքների պատասխանատվությունը:

Թիվ ԵԴ*1/0353/01/23* քրեական գործի մասին

Տիգրան Կարապետյանը 2015թ. դեկտեմբերի 1-ից մինչև 2021թ. մարտի 9-ն ընկած ժամանակահատվածում հանդիսացել է Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող «Բնակչության հատուկ սպասարկման» ՀՈԱԿ-ի «Ավան» գերեզմանատան հսկիչ: Նույն ՀՈԱԿ-ի ենթակայության տակ գտնվող «Քանաքեռ» գերեզմանատան վերաբերյալ չունենալով գերեզմանատներ հատկացնելու, հուղար-կավորություններ կազմակերպելու, գերեզմանատան շահագործման և պահպանման գործառույթների վերաբերյալ լիազորություններ, «բաց» իրավական կարգավիճակ ունեցող «Քանաքեռ» գերեզմանատանը, որտեղ տվյալ ժամանակահատվածում գերեզմանատեղիի հատկացումը կատարվել է անվճար սկզբունքով, դեռևս չպարզված հանգամանքներում՝ 2018թ. հունվարի 18-ին, քաղաքացի Կարեն Աղաջանյանի օգտին, ըստ մեղադրանքի՝ ակնհայտ ապօրինի գործողություն է կատարել:

Մասնավորապես՝ «Քանաքեռ» գերեզմանատանը վերջինիս հանգուցյալ քրոջը՝ Լ. Աղաջանյանին հողարկավորելու նպատակով 5x6 քմ չափերով գերեզմանատեղ հատկացնելու համար, հանդես գալով վերը նշված գերեզմանատանը որպես գերեզմանատեղ, դրանց վերաբերյալ համապատասխան փաստաթղթեր տրամադրելու իրավասություն ունեցեող անձ, խարդախությամբ՝ խաբեությամբ և Կարեն Աղաջանյանի վստահությունը չարաշահելով, կեղծ տեղեկատվություն է հայտնել, թե իբր գերեզմանատեղերը տրամադրվում են գումարի դիմաց: Միաժամանակ Կարեն Աղաջանյանին իրացնելով քննությամբ դեռևս չպարզված անձի կողմից կեղծված՝ «Բնակչության հատուկ սպասարկում» ՀՈԱԿ-ի իրավունք վերապահող փաստաթուղթ, այլ կերպ՝ օգտագործելով Լ. Աղաջանյանի անվամբ 18.01.2018 թվագրմամբ թիվ 118542 գերեզմանի կեղծված քարտը, գերեզմանատեղիի

հատկացման նպատակով Կարեն Աղաջանյանից հափշտակել է զգալի չափերով՝ 482.690 ՀՀ դրամ գումարին համարժեք 1.000 ԱՄՆ դոլար գումար: Այդկերպ գույքային վնաս է պատճառվել Կարեն Աղաջանյանին և Երևան համայնքին:

Գրեթե նույն եղանակով Արման Սեյրանյանից հափշտակել է խոշոր չափի՝ 862.290 ՀՀ դրամին համարժեք 1.800 ԱՄՆ դոլար գումար, իսկ Վարուժան Ստեփանյանից մաս-մաս հափշտակել է խոշոր չափի՝ 1.200.000 ՀՀ դրամ, Վահան Մկրտչյանից՝ 583.920 ՀՀ դրամ գումարին համարժեք 1.400 ԱՄՆ դոլար գումար, Անդրանիկ Հարությունյանի վստահությունը չարաշահելով, վերջինից հափշտակել է խոշոր չափի՝ 2.052.280 ՀՀ դրամին համարժեք 4000 ԱՄՆ դոլար գումար և այլն: Այդ կերպ գույքային վնաս պատճառելով նշված անձանց և Երևան համայնքին:

Բացի այդ, Նորայր Մովսեսյանի ընտանեկան գերզմաններն անարգանքի է ենթարկել, այն է՝ իրականացրել է մահացածների թաղելու վայրերի և գերեզմանների վրա եղած առարկաների՝ տապանաքարերի ոչնչացումը, որից հետո ազատված գերեզմանատեղին ներկայացնելով իբրև նոր գերեզմանատեղի՝ խաբեությամբ և Վարուժան Պետրոսյանի վստահությունը չարաշահելու եղանակով, 400.000 ՀՀ դրամ գումարի դիմաց, այն հատկացրել է Վ. Պետրոսյանին՝ վերջինիս մանկահասակ դստեր հուղարկավորելու նպատակով: Վարուժան Պետրոսյանը փոխանցել է պայմանավորված գումարից 250.000 ՀՀ դրամը, իսկ գումարի մյուս մասը պետք է փոխանցվեր գերեզմանի քարտը տրամադրելուց հետո, սակայն Տիգրան Կարապետյանը չի կարողացել ապահովել գերեզմանի վկայականի հատկացումը, որի պատճառով էլ չի կարողացել իր կամքից անկախ հանգամանքներով իրագործել իր դիտավորության մեջ ընդգրկված՝ 400.000 ՀՀ դրամ գումարի չափով հափշտակությունը, չի ստացել մնացած՝ 150.000 ՀՀ դրամ գումարը:

Տիգրան Կարապետանին մեղադրանք է առաջադրվել արարքի կատարման ժամանակ գործող ՀՀ քրեական օրենսգրքի (2003թ. ընդունված և 2022թ. հուլիսի 1-ին ուժը կորցրած) *265*-րդ հոդվածի *1*-ին մասի (3 դրվագ, դիակը կամ թաղման վայրերն անարգանքի ենթարկելը), *322*-րդ հոդվածի *1*-ին մասի (1 դրվագ, ինքնիրավչություն), գործող Քրեական օրենսգրքի *255*-րդ հոդվածի *1*-ին մաս (1 դրվագ, խարդախություն) *255*-րդ հոդվածի *2*-րդ մասի *3*-րդ կետի (4 դրվագ, խոշոր չափերով խարդախություն), *457*-րդ հոդվածի *1*-ին մասի հատկանիշներով (9 դրվագ, փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր կեղծելը կամ կեղծ փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր իրացնելը, պատրաստելը կամ օգտագործելը):

Ընդհանուր իրավասության դատարանը, հետագայում նաև Վերաքննիչ քրեական դատարանն արձանագրել են, որ մեղադրյալ Տիգրան Կարապետյանի և տուժողների միջև առկա են հաշտության վերաբերյալ ինքնուրույն ու ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնություններ: Տիգրան Խաչիկի Կարապետյանին մեղսագրվում է չորս դրվագով միջին ծանրության հանցանքի կատարում, իսկ նրա դատվածության և հետախուզման առկայության վերաբերյալ տեղեկանքում առկա տվյալների համաձայն՝ վերջինս համարվում է դատվածություն չունեցող անձ:

Տիգրան Կարապետյանի պաշտպանի միջնորդության հիման վրա, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2024թ. փետրվարի 6-ին քրեական հետապնդումը դադարեցրել է՝ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի 1-2-րդ մասերի համաձայն՝
1. Եթե անձն առաջին անգամ է հանցանք կատարել, ապա ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, և նրա ու տուժողի միջև առկա է հաշտության վերաբերյալ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնությունը, բացառությամբ այն դեպքերի, երբ կատարված հանցանքում առկա են ընտանիքում բռնության հատկանիշներ:
2. Եթե անձն առաջին անգամ է հանցանք կատարել, որը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությանը հանցակցություն է, ապա նա հաշտության հիմքով ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե առկա է հաշտության վերաբերյալ տուժողի և տվյալ հանցակցի՝ ինքնուրույն և ազատ կամարտահայտության վրա հիմնված փոխադարձ համաձայնությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ առաջին անգամ հանցանք կատարած է համարվում այն անձը, որը նախկինում հանցանք չի կատարել կամ կատարել է, սակայն ազատվել է քրեական պատասխանատվությունից, կամ որի դատվածությունը Քրեական օրենսգրքով սահմանված կարգով մարվել կամ վերացվել է:

Վերաքննիչ դատարանը գտել է, որ այս դեպքում «նախկինում» եզրույթը չի կարող վերաբերել նույն վարույթի շրջանակներում անձի կողմից կատարված բազմադրվագ հանցագործություններից մեկ դրվագին, այլ վերաբերում է մեկ այլ քրեական

վարույթով կիրառված՝ տուժողի հետ հաշտության հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելուն, քանի որ նշված նորմի ընդհանուր տրամաբանությունն այն է, որ մեղադրյալը նշված խրախուսական նորմից կարող է օգտվել միայն մեկ անգամ: Այսինքն՝ նշված պայմանի բացակայության հիման վրա անձին քրեական պատասխանատվությունից ազատելը չի թույլատրվի միայն այն դեպքում, երբ վերջինս նախկինում տուժողի հետ հաշտվելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատվելուց հետո կրկին հանցանք է կատարել, իսկ նախկինում ՀՀ քրեական օրենսգրքի 82-րդ հոդվածի ուժով քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ պետք է առկա օրինական ուժի մեջ մտած դատական ակտ:

18.04.2003թ. ընդունված Քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝ անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են... երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից:
Նույն օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ Տիգրան Կարապետյանին վերագրվող արարքները դասվում են ոչ մեծ ծանրության հանցագործությունների թվին, հետևաբար՝ դրանք կատարած անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է երկու տարի և այդ ժամկետը չի կասեցվել կամ ընդհատվել, իսկ մեղադրյալը տալիս է իր համաձայնությունը կամ չի առարկում այդ հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու դեմ:

Դատարանի կողմից որոշում կայացնելու օրվա՝ 2024թ. փետրվարի 6-ի անցել է երկու տարուց ավել ժամանակ և քրեական գործով ձեռք բերված ապացույցներով և այլ փաստական տվյալներով չի հաստատվում նշված ժամանակահատվածից հոսող վաղեմության ժամկետների ընթացքը կասեցված կամ ընդհատված լինելու հանգամանքը:

Այն դեպքում, երբ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրանում է գործի դատական քննության փուլում, այդ հիմքով նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու ընթացակարգի իրականացման պարտականությունը կրում է դատարանը: Այս դեպքում, պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը լրացել է դատական քննության փուլում:

Այս գործով, թեև դատախազն այլ դիրքորոշում է ունեցել, սակայն Վճռաբեկ բողոք չի ներկայացրել՝ փաստացի ընդունելի համարելով Վերաքննիչ քրեական դատարանի որոշումը:

Թիվ ԵԴ*1/0353/01/23* քրեական գործով՝ մասանավոր սեփականություն հանդիսացող հողատարածքի և գերեզմանատան միջև սահմանների բացակայություն:

Քրեական գործի դրվագներից մեկով պարզվել է, որ Երևան քաղաքի «Քանաքեռ գերեզմանատանը *2018* թվականին հուղարկավորված Լ. Համբարձումյանի աճյունը նույն գերեզմանատանն ավելի հարմար վայր տեղափոխելու համար վերջինիս որդին՝ Է. Համբարձումյանը խնդրանքով դիմել է Տիգրան Կարապետյանին: Որպես նոր գերեզմանատեղի, օրենսդրությամբ սահմանված կարգի խախտմամբ իր իրական կամ ենթադրյալ իրավունքն ինքնակամ իրականացնելով՝ *2020* թվականի ապրիլ-մայիս ամիսների ընթացքում, Տ. Կարապետյանը *35* քմ մակերեսով հողատարածք է հատկացրել «Քանաքեռ գերեզմանատանը հարակից՝ Երևան քաղաքի Հասրաթյան փողոցի *8/6* հասցեում գտնվող Քրիստինե Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող, և *439.000* ՀՀ դրամ արժողությամբ հողատարածքում՝ այն համարելով որպես «Քանաքեռ գերեզմանատան տարածք: Դրա հետևանքով Լ. Համբարձումյանի գերեզմանատեղին տեղափոխվել է նշված հողատարածք, ինչի արդյունքում էական վնաս է պատճառվել Քրիստինե Սարգսյանին իրավունքներին՝ վերջինիս զրկելով ՀՀ Սահմանադրությամբ և այլ օրենքներով երաշխավորված՝ հողատարածքը սեփական հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքից:

Կառավարության Որոշմամբ հաստատված գերեզմանատների շահագործման ընդհանուր կանոնների համաձայն՝ յուրաքանչյուր գործող գերեզմանատան համար համայնքի ղեկավարը (Երևանում՝ Երևանի քաղաքապետը) հաստատում է գերեզմանատների հողերի օգտագործման հատակագիծը (սխեման), որում ի թիվս այլի, նախատեսվում են գերեզմանատան զբաղեցրած հողատարածքի սահմանները, գերեզմանատան սանիտարապաշտպանիչ գոտին՝ պարսպից (ցանկապատից) առնվազն 10 մետր հեռավորությամբ (Որոշման *4*-րդ հավելվածի *10*-րդ կետ)**:**

Գերեզմանատները (դիակիզարանները) կազմավորվում են տեղական ինքնակառավարման մարմինների (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի) որոշմամբ՝ ըստ գտնվելու բնակավայրի հաստատված գլխավոր հատակագծերի, հողերի գոտևորման և օգտագործման սխեմաների հիման վրա՝ քաղաքաշինական,

բնապահպանական և սանիտարական նորմերին համապատասխան (Որոշման 4-րդ հավելվածի 6-րդ կետ):

Օրենքը պարսպապատման պարտադիր պահանջ դնում է միայն մասնավոր գերեզմանատան սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ վրա: Մասնավորապես՝ Օրենքի 19.1 հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ մասնավոր գերեզմանատան սեփականատեր հանդիսացող իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը պարտավոր է պարսպապատել գերեզմանատան տարածքը:

Գերեզմանատանը հարակից տարածքներում գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողատարածքները պետք է լինեն գերեզմաններից առնվազն 40 մետր հեռավորության վրա (Որոշման 4-րդ հավելվածի 19-րդ կետ):

Թեև օրենքը պարսպապատման պարտադիր պահանջ է սահմանում միայն մասնավոր գերեզմանատների համար, սակայն, համայնքային գերեզմանատների դեպքում էլ համայնքի ղեկավարը (Երևանում՝ Երևանի քաղաքապետը) պետք է հաստատի գերեզմանատների հողերի օգտագործման հատակագիծը (սխեման)՝ գերեզմանատան հողատարածքի սահմաններով, ինչպես նաև հաստատի գերեզմանատան սանիտարապաշտպանիչ գոտին՝ պարսպից (ցանկապատից) առնվազն 10 մետր հեռավորությամբ: Տվյալ պարագայում «պարիսպ» բառը կարող է ընկալվել բաժանարար գիծ, տարածքի առանձնացում, սահմանազատում, ինչը պետք է ապահովեն համայնքի ղեկավարները: Այս դեպքում ապահովված չի եղել, ինչն այլոց սեփականության իրավունքը խախտելու հիմք է ստեղծել:

Բացթողումներ և ռիսկեր

- Համայնքային գերեզմանատները չունեն հստակ սահմաններ, ինչը հիմք է դառնում այլոց սեփականության իրավունքի խախտումների համար
- Համայնքային գերեզմանատները հիմնականում պարսպապատված կամ սահմաններն առանձնացված չեն
- Գերեզմանատներում գերեզմանատեղերի և հուղարկավորությունների գրանցումները չեն իրականացվում էլեկտրոնային եղանակով
- Թղթային գրանցամատյաններում գրանցումներն ամբողջական չեն, ինչը չարաշահումների հնարավորություն է տալիս
- Թղթային գրանցամատյանների դեպքում մեծ է նաև գերեզմանների համադրումների վտանգը, քանի որ չկա գերեզմանատեղիի գծային պատկեր

- Համայնքի ղեկավարի կողմից կառավարիչների, հսկիչների գործողությունների նկատմամբ պատշաճ վերահսկողության մեխանիզմներ չկան
- Գերեզմանատներում չկան պահակներ, անվտանգության տեսախցիկներ, ինչը չի ապահովում տարածքում գտնվող գույքի անվտանգությունը: